



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. առաջին եռամսյակում /վերլուծություն/

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 36499 գործարքներ, որոնց քանակը 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.3%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 27.9%-ով:

2010թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9696 օտարման գործարքների 80.7%-ը կազմել են առուվաճառքները, 18.1%-ը՝ նվիրատվությունները և 1.2%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 34.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 23.6%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 22.4%-ով:

2010թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.1%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 51.4%-ով:

2010թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2009թ.	առաջին եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	499200	470600	466500
Արաբկիր	365000	373900	365900
Քանաքեռ-Զեյթուն	283900	283500	276300
Նոր-Նորք	251400	234800	226600
Ավան	252500	235900	229800
Էրեբունի	266100	248000	240700
Շենգավիթ	254200	249100	241100
Դավթաշեն	278600	270300	260200
Աջափնյակ	246500	239300	230500
Մալաթիա-Մեքաստիա	237900	236700	228900
Նուբարաշեն	151800	143300	142600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	280600	271400	264400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. առաջին եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 2.6%-ով:

2010թ. առաջին եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 886 բնակարաններ, որոնց քանակը, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 22.5%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 32.0%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/
--------	----------	-----------------------

		առաջին եռամսյակ 2009թ.	առաջին եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140200	142200	136700
	Ապարան	38600	44800	44600
	Թալին	48300	52100	50500
Արարատ	Արտաշատ	94600	92800	90400
	Մասիս	144700	125400	120000
	Վեդի	88900	92600	90800
	Արարատ	79200	88600	86300
Արմավիր	Վաղարշապատ	171400	156900	157900
	Արմավիր	116900	120500	117500
	Մեծամոր	84600	81300	81600
Գեղարքունիք	Սևան	98700	93100	90700
	Գավառ	52600	45300	43200
	Մարտունի	76900	83700	82000
	Վարդենիս	33900	32500	31600
	Ճամբարակ	17500	19100	18900
Լոռի	Վանաձոր	96300	90400	92100
	Ստեփանավան	53200	57500	56600
	Սպիտակ	67900	80000	76600
	Ալավերդի	34500	30800	31800
	Տաշիր	35300	35200	34900
	Թումանյան	5800	6100	6100
	Շամլուղ	3300	3400	3400
	Ախթալա	13400	14100	14100
Կոտայք	Աբովյան	149100	160000	151100
	Նոր Հաճն	131300	125500	129800
	Բյուրեղավան	107700	102400	100700
	Եղվարդ	123200	117400	121900
	Հրազդան	67500	62700	59800
	Ծաղկաձոր	175800	181500	179500
	Չարենցավան	94400	77200	76700
Շիրակ	Գյումրի	112300	119700	114400
	Արթիկ	65400	58400	56800
	Մարալիկ	31400	30700	30000
Սյունիք	Գորիս	119900	138100	138200
	Կապան	102400	99300	102100
	Միսիան	91600	79700	81400
	Մեղրի	54500	58200	56500
	Ագարակ	32700	33000	32800
	Քաջարան	55300	60600	59100
	Դաստակերտ	7300	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	80600	71100	70500
	Եղեգնաձոր	108900	107100	110300
	Ջերմուկ	133000	111800	109300
Տավուշ	Դիլիջան	99400	96700	91900
	Իջևան	150300	138200	132100
	Բերդ	42100	42000	42000
	Նոյեմբերյան	32800	33600	33300
	Այրում	22200	24000	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2010թ. առաջին

եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.5%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1095 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 268, մարզերում միասին վերցրած՝ 827: 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 19.8%-ով, ընդ որում, Երևանում՝ 39.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.3%-ով: 2009թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.0%-ով, ընդ որում Երևանում՝ 60.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.3%-ով:

2010թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին եռամսյակ 2009թ.	առաջին եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	514000	484200	472000
Արաբկիր	420000	380800	371000
Քանաքեռ-Զեյթուն	320100	288800	280000
Նորք-Մարաշ	313400	284300	279800
Ավան	287600	239400	234500
Էրեբունի	293600	252400	244700
Շենգավիթ	289500	252200	244200
Դավթաշեն	321100	277300	264700
Աջափնյակ	287500	243700	234700
Մալաթիա-Սեբաստիա	283000	242100	232500
Նուբարաշեն	170100	147200	146800
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	318200	281100	273200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. առաջին եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 2.9%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

?	Քաղաքներ	Միջին գները /դրամ/
---	----------	-----------------------

		առաջին եռամսյակ 2009թ.	առաջին եռամսյակ 2010թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	147100	146100	141300
	Ապարան	40400	47600	46600
	Թալին	50600	54300	51700
Արարատ	Արտաշատ	106500	99400	92200
	Մասիս	151900	127100	122800
	Վեդի	92600	95300	92400
	Արարատ	81000	92800	88000
Արմավիր	Վաղարշապատ	179500	165900	164700
	Արմավիր	126700	124500	119200
Գեղարքունի ք	Սևան	106400	95200	92700
	Գավառ	57600	47600	45900
	Մարտունի	80300	86700	83900
	Վարդենիս	38500	34600	34000
	Ճամբարակ	22200	21300	20700
Լոռի	Վանաձոր	107600	96800	95500
	Ստեփանավան	56300	61200	59800
	Մայիտակ	70300	81500	78600
	Ալավերդի	37900	35000	34500
	Տաշիր	39300	38400	37200
	Թումանյան	10400	10400	10100
	Շամլուղ	7400	7500	7400
	Ախթալա	16500	18200	18200
Կոտայք	Աբովյան	179700	165300	154100
	Նոր Հաճն	144700	134600	135900
	Բյուրեղավան	121100	108900	102500
	Եղվարդ	134200	128100	127200
	Հրազդան	79400	64700	62700
	Ծաղկաձոր	277700	305400	296700
	Չարենցավան	102100	80300	80000
Շիրակ	Գյումրի	124800	123100	116300
	Արթիկ	67400	61000	60200
	Մարալիկ	33500	31700	31400
Սյունիք	Գորիս	129300	143900	140000
	Կապան	112900	104200	105200
	Միսիան	93600	84500	84700
	Մեղրի	56000	60000	58400
	Ագարակ	34700	35000	34500
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	87600	73900	73100
	Եղեգնաձոր	114400	114300	113500
	Ջերմուկ	105500	116500	111800
Տավուշ	Դիլիջան	115800	101000	95800
	Իջևան	154700	141100	133600
	Բերդ	44400	43900	43500
	Նոյեմբերյան	36900	35200	34800
	Այրում	23900	25900	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. առաջին եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները

/ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, աճել են 2.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3661 միավոր /3101.94 հա/ հողեր, որից Երևանում՝ 216 միավոր /45.00 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2007 միավոր /2896.48 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.90 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1159 միավոր /107.42 հա/, որից Երևանում՝ 129 միավոր /6.84 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 400 միավոր /57.79 հա/, որից Երևանում՝ 64 միավոր /34.28 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 65 միավոր /29.91 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /1.98 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 17 միավոր /9.34 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 5 միավոր /0.25 հա/,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.75 հա/:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 3287 միավորի /2903.85 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 187 միավոր /42.93 հա/, նվիրատվության գործարքներ՝ 316 միավոր /189.50 հա/, որից Երևանում՝ 28 միավոր /2.02 հա/ և փոխանակության գործարքներ՝ 58 միավոր /8.59 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 27.6%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 43.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 10.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 62.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1516.76 հա, որից 1497.02 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 20.6% կամ 678 գործարքներ /615.55 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 51 գործարքներ /3.70 հա/, իսկ 78.8% կամ 2590 միավորը /2278.58 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 129 միավոր /39.18 հա/: 2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 19 գործարք /9.72 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	3	1.16	23	0.57	25	1.97	8	0.86	8	0.83	90	5.63	23	31.87				
Արագածոտն	16	18.32	0	0.00	6	1.75	21	1.46	144	116.56	0	0.00	76	9.00	5	0.18				
Արարատ	5	4.86	5	3.47	6	0.52	15	0.21	182	135.61	1	0.01	177	16.93	9	0.27				
Արմավիր	50	224.75	3	0.72	4	0.39	27	3.72	238	1272.27	4	1.92	131	11.85	10	0.40				
Գեղարքունիք	50	40.76	3	1.29	27	2.51	19	3.42	322	246.20	1	0.10	68	8.02	2	0.24				
Լոռի	21	192.59	1	0.15	4	0.35	31	0.92	91	64.33	0	0.00	22	2.19	10	0.47				
Կոտայք	22	37.73	3	0.92	45	3.77	69	1.61	349	104.83	17	8.14	185	17.31	23	1.77				
Շիրակ	2	3.65	4	0.68	40	1.96	22	0.69	115	116.17	2	0.19	31	4.54	10	0.20				
Սյունիք	15	6.26	5	0.35	4	0.36	15	0.88	60	40.33	1	0.80	22	1.85	6	0.44				
Վայոց Ձոր	13	38.56	0	0.00	1	0.08	11	0.13	13	14.59	0	0.00	12	0.90	2	0.08				
Տավուշ	3	1.98	3	1.17	19	2.77	6	1.25	76	32.91	0	0.00	21	1.87	5	2.02				
Ընդամենը	197	569.46	30	9.91	179	15.03	261	16.26	1598	2144.66	34	11.99	835	80.09	105	37.94				

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք															
	Ընդամենը				Արդյունաբ. օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Ընդամենը				Գյուղ. նշանակության հողերի				Արդյունաբ. օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի						Բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի					
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	50	3.68	3	1.16	23	0.57	24	1.95	1	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.02						
Արագածոտն	4	1.321	0	0.00	3	1.32	1	0.001	39	20.21	16	18.32	0	0.00	3	0.43	20	1.46						
Արարատ	4	1.35	2	1.30	0	0.00	2	0.05	27	7.71	5	4.86	3	2.17	6	0.52	13	0.16						
Արմավիր	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	81	229.49	49	224.68	3	0.72	4	0.39	25	3.70						
Գեղարքունիք	1	0.20	0	0.00	0	0.00	1	0.20	98	47.78	50	40.76	3	1.29	27	2.51	18	3.22						
Լոռի	7	0.16	0	0.00	1	0.01	6	0.15	50	193.85	21	192.59	1	0.15	3	0.34	25	0.77						
Կոտայք	9	0.48	0	0.00	0	0.00	9	0.48	129	43.46	21	37.64	3	0.92	45	3.77	60	1.13						
Շիրակ	12	0.29	2	0.14	7	0.13	3	0.02	56	6.69	2	3.65	2	0.54	33	1.83	19	0.67						
Սյունիք	1	0.05	0	0.00	0	0.00	1	0.05	37	7.09	14	5.55	5	0.35	4	0.36	14	0.83						
Վայոց Ձոր	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	24	38.76	13	38.56	0	0.00	1	0.08	10	0.12						
Տավուշ	12	1.78	1	0.37	7	0.18	4	1.23	19	5.37	3	1.98	2	0.80	12	2.58	2	0.01						
Ընդամենը	103	9.33	8	2.97	41	2.21	54	4.15	561	600.43	194	568.59	22	6.94	138	12.81	207	12.09						

Հանրապետությունում 2010թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարքներ /0.87 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. առաջին եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 8.2%-ով: Ընդ որում

Երևանում նվազել է 93.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 11.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 8.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 12.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 6.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 18.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. առաջին եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	6.11	69.1	832.2	220.4	95	57.01	365.0	12000.0	4342.1
Ապարան						10	11.02	86.5	2727.3	561.1
Թալին	7	12.21	37.6	67.5	58.1	24	28.80	93.6	5494.5	510.0
Ծաղկահովիտ						14	19.54	79.5	1000.0	249.7
Արարատի մարզ										
Արտաշատ	2	0.68	127.3	133.0	130.2	61	45.24	335.1	10833.3	2193.9
Մասիս	3	4.18	110.0	187.5	132.6	32	36.39	200.0	11904.8	3022.7
Վեդի						85	52.23	207.0	10795.1	1834.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	20	17.08	63.2	525.0	179.0	89	61.46	294.3	9090.0	1214.5
Բաղրամյան	22	201.50	33.8	622.1	136.6	36	917.34	90.6	2561.1	686.8
Վաղարշապատ	7	6.10	33.0	1600.0	732.1	97	282.36	444.4	11764.7	3089.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	45	33.53	143.0	464.4	321.4	191	83.30	199.8	1875.0	427.0
Ճամբարակ	5	7.23	109.3	976.8	452.6	49	29.90	60.5	953.3	265.0
Մարտունի						32	6.21	51.1	2850.0	598.4
Սևան						13	13.77	52.2	2134.8	246.9
Վարդենիս						36	111.61	41.2	2575.1	433.8
Լոռու մարզ										
Ալավերդի						45	21.23	170.4	6424.2	865.6
Գուգարք	20	192.29	44.0	407.0	223.2			234.6	6065.9	1100.0
Սպիտակ	1	0.30	160.0	160.0	160.0	2	1.01	250.0	5555.5	629.7
Ստեփանավան						13	19.79	90.6	1686.6	372.8
Տաշիր						30	19.60	45.3	1384.4	182.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	11	17.38	68.1	1845.8	440.3	238	31.90	279.3	11942.7	4666.3
Եղվարդ	8	15.26	150.0	740.8	290.2	71	53.67	174.4	11971.8	3465.6
Հրազդան	2	5.00	848.8	1322.5	1085.7	39	18.98	130.5	10256.4	1685.1
Շիրակի մարզ										
Ախուրյան						41	42.17	252.0	1693.1	519.2
Ամասիա	1	2.75	76.0	76.0	76.0	9	21.72	40.9	261.0	130.6
Անի						25	25.88	110.6	546.9	290.0
Աշոցք						12	9.73	58.5	215.8	116.3
Արթիկ	1	0.90	520.0	520.0	520.0	23	8.04	79.4	1428.6	260.7
Սյունիքի մարզ										

Գորիս	11	2.18	550.0	1200.0	631.3	18	10.44	92.6	1023.2	508.3
Կապան	2	3.17	84.0	241.5	162.8	3	0.90	120.0	841.6	294.1
Մեղրի	1	0.20	6300.0	6300.0	6300.0	5	0.90	193.0	3000.0	608.3
Սիսիան						34	28.09	46.3	1977.4	310.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	34.76	34.4	67.5	45.2	13	14.59	125.0	10000.0	1572.3
Վայք	2	3.80	68.8	176.8	122.8			58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.31	929.5	929.5	929.5	28	4.40	213.3	3783.8	548.1
Իջևան	2	1.67	485.3	1313.3	899.3	11	2.73	267.5	9454.5	1078.3
Նոյեմբերյան						37	25.77	46.7	7368.4	799.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. առաջին եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1493.0	36.8	194.5	115.7	69	72836.0	130.7	22200.0	2572.9
Ապարան						3	4020.0	124.1	609.6	263.4
Թալին	1	2787.0	85.0	85.0	85.0	1	1545.0	63.2	1454.8	140.7
Ծաղկահովիտ						2	9528.0	60.0	214.3	77.9
Արարատի մարզ										
Արտաշատ	5	4940.0	533.0	826.0	749.0	56	73905.0	173.9	7140.3	893.0
Մասիս	1	254.0	3038.4	3038.4	3038.4	76	50813.0	187.5	25000.0	1216.8
Վեդի						44	43407.0	126.1	5000.0	661.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2732.0	277.7	1400.0	992.6	37	45501.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	8	10526.0	100.0	833.3	184.7
Վաղարշապատ						85	61890.0	197.4	26528.4	1532.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	450.0	318.2	341.5	329.8	19	22268.0	186.6	1084.3	462.3
Ճամբարակ	8	6050.0	118.7	131.4	125.9	9	8651.0	71.3	2286.2	139.7
Մարտունի	4	2364.0	118.8	248.7	140.5	34	40290.0	119.3	5000.0	274.2
Սևան	13	16189.0	113.3	466.0	209.8	4	4700.0	240.0	3110.4	229.3
Վարդենիս						2	4312.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						5	5140.0	114.3	1388.9	205.5
Գուգարք						4	2183.0	77.9	14083.3	766.8
Սյիտակ	2	2880.0	49.6	49.6	49.6	9	12240.0	104.9	1348.3	198.9
Ստեփանավան	1	500.0	82.8	82.8	82.8	3	1324.0	88.2	1666.7	147.5
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										

Արուվան	22	17418.2	454.0	1510.0	1572.9	83	79298.0	264.5	35353.5	2032.7
Եղվարդ	19	17015.0	419.1	4750.2	2726.7	88	77529.0	173.6	27000.0	2870.1
Հրազդան	4	3266.0	537.0	3234.0	1212.5	13	10639.0	117.7	34848.5	1340.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	20	12879.9	317.3	3571.4	1911.1	10	10040.7	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	9	3600.0	291.5	412.5	396.8	6	8897.0	67.9	180.6	125.6
Աշոցք						2	7380.0	40.8	144.0	60.0
Արթիկ	4	1800.0	68.8	555.2	392.9	13	19109.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						7	5281.0	112.2	1700.0	299.8
Կապան	4	3585.0	32.0	1047.5	514.2	4	3017.0	67.9	2638.9	239.0
Մեղրի						7	4950.0	68.5	632.9	150.5
Սիսիան						4	5257.0	123.5	875.0	163.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	758.0	750.7	750.7	750.7	7	6050.0	96.7	7659.6	423.2
Վայք						4	2720.0	120.7	1448.3	160.4
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	97.2
Բջևան	11	24711.0	244.2	2300.0	1700.3	15	13777.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան	1	1100.0	380.0	380.0	380.0	6	4885.0	125.0	1948.1	165.3

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 24 գործարքներ 5.89 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ /2.34 հա/ Գեղարքունիքի, 11-ը՝ /0.94 հա/ Լոռու և 5-ը՝ /2.61 հա/ Շիրակի մարզերում:

2010թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2502 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 60.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 30.0%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 14.8%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 192 բնակարանների, 115 անհատական բնակելի տների, 1046 հասարակական, 156 արտադրական նշանակության օբյեկտների, 892 միավոր /5932.55 հա/ հողերի, 100 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. առաջին եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 41 վարձակալության գործարքների, այդ թվում 9 միավոր /0.26 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 2.3 անգամ, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ՝ նվազել 21.2%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում վարձակալված 5932.55 հա հողերից 70.33 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 5862.22 հա հողերի 646.51 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 35.46 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 3816.13 հա, որից 3813.63 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական

սահմաններից դուրս վարձակալվել են 3544.13 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. առաջին եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	12.63	35	7.51
Արարատ	0	0.00	50	76.80
Արմավիր	0	0.00	15	90.61
Գեղարքունիք	1	72.00	67	730.37
Լոռի	0	0.00	11	43.87
Կոտայք	0	0.00	3	5.00
Շիրակ	1	3459.50	205	354.13
Սյունիք	0	0.00	39	168.32
Վայոց Ձոր	0	0.00	8	2.91
Տավուշ	0	0.00	26	34.57
Ընդամենը	3	3544.13	459	1514.09

2010թ. առաջին եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4051 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 40.3%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 71.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.0%/, առանձնատների /23.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.2%/ և հողերի /16.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1763 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 38.6%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 60.6%-ով:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 905.21 հա հողեր, որից 7.48 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 91.1%-ը, կամ 825.00 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.43 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 527.95 հա, որից 526.31 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 315 գործարքներ, որից 225-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 78.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16.5%-ը՝ անհատական բնակելի տների, 2.5%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.3%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.6%-ը՝ այգետնակների և 0.6%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 36.9%-ով, ընդ որում Երևանում՝ 42.9%-ով, մարզերում միասին վերցրած՝ 14.3%-ով, իսկ

2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 3.6 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.3 անգամ, մարզերում միասին վերցրած՝ 4.5 անգամ:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 2 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.02%: 2010թ. առաջին եռամսյակում, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 14.3%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել՝ 42.9%-ով: 2010թ. առաջին եռամսյակում մասնավորեցման գործարքների 62.5% արձանագրվել է Գեղարքունիքի, 12.5-ական% Երևանում, Շիրակի և Լոռվա մարզերում:

2010թ. առաջին եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5614 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2009թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 22.7%-ով, իսկ 2009թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 26.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.6%/: